

15.08.2007

Ի գիտություն «Հայկական ժամանակ» օրաթերթի

Խորին շնորհակալություն հայտնելով, որ արձակուրդից վերադառնալուն պես ձեր «հիշարժան» թերթի էջերում հիշատակեցիք նաև իմ հիշարժան անունը՝ տեղեկացնեմ:

1. «ԱԼՄ-Հոլդինգ» հեռուստաընկերությունում եղել եմ ոչ միայն «Տարեթվեր և մարդիկ» հաղորդաշարի «վարող», այլև պատրաստել եմ այն սկզբից մինչև վերջ:
2. ԿԸՀ-ում ոչ թե «ուղեկցել» եմ միջազգային դիտորդներին, այլ աշխատել եմ որպես թարգմանիչ, քանզի բացի մայրենի լեզվից ազատ տիրապետում եմ ռուսերենին, անգլերենին և ֆրանսերենին:
3. Ինչ վերաբերում է վերոհիշյալ հաղորդման՝ ապրիլի 12-ի թողարկման շրջանակներում ԿԸՀ նախագահ Գ. Ազարյանի անունը հիշատակելուն, ապա գտնում եմ, որ իր բազմաթիվ արժանիքներից բացի նա բարձր է թեկուզ նրանով, որ մեծահոգաբար ընդունում է ոչ միայն առողջ քննադատությունը, այլև տանում է բամբասանքի հասնող ամեն տեսակի հրապարակումներ:
4. Մամուլի նախկին քարտուղար Ծովինար Խաչատրյանի հանդեպ տածել և տածում եմ բարիդրացիական վերաբերմունք. կարծում եմ՝ ինքը նույնպես: Մաղթենք նրան բարի բախտ. վերջերս նա ընտանիք է կազմել:

Ձեզ էլ խորհուրդ կտամ փորձել մեծն Թումանյանի քառյակի «Վատը լավ եմ տեսել ես» տողը չնենգափոխել. դուք նույնիսկ լավն եք վատ տեսնում:

S. Ohanjyan